

փառասիրութիւն չ'ունի և զրուագներ էլ չըկան, այն ինչ հարաւային զրան ճակատը գեղեցիկ քանդակներով զարդարած է, Այդ զրան մաս երեւմէ մի արձանագրութիւն հայերէն, կարծեմ արաբացի տառերով արձանագրութիւն էլ կար, ես միջոց և յարմարութիւն ըլդտայ արձանագրիրը վերծանելու ։ Հ. Կիւրեղ այս զրան քանդակներն ու ծաղկի նկարները աւելի հին է համարում քան պարսպի շինութիւնը, իսկ արձանագրին զալով՝ ասումէ, « այստեղ (զրան զրսի կողմը) հայկական քանդակներու հետ միասին կ'երեի և արձանագրի մի փոքր մասն պահող քար մի, որ զրուած է անշուշտ քանդակաց թերին լեցնելու համար, որոյ ընթերցմանքէն մի ամրող խօսք չըհարկցուիր » ։ Քաջրերունին իւր Ալեքսանդրապոլից Պարս ճանապարհորդական նկատողութեան մէջ մանրամասն յիշելով Պարսի տները, դպրոցի մօտաւոր անցեալը, աշակերտների ձեռքով հրատարակուած օրագիրը ևլն. 2) ոչինչ չէ խօսում բերդապարսպի մասին, զուցէ շարունակութիւնը պարունակում լինէր իւր մէջ այդ մասին տեղեկութիւններ, բայց դժբաղարար, չէ շարունակուել Իմնկատողութեամբ այդ զրան ճակատի քանդակներն ու զրուագները ոչինչ ներգաշնակութիւն չեն կազմում, ըստ իս, դրան ճակատը քանդուելուց յետոյ ձեռք ընկած զրուագաւոր քանդակագործ քարերը իրբե շինութեան հասարակ քար գործ են ածել ինչ և իցէ։

(Եպահանգելէ) .

Յ. Ա. Մ.

ԲԵՐՅԱԾՈԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Քարոյակը թութեան նպատակը պիտի լինի այն, որ կրթուողի հոգւոյ մէջ արմատանան բարի և ազնիւ զգացմանց հապկումները, իսկ միւս կողմից հակառակ զիպուածումը կրթուողը ճանաչէ կամ թէ չէ՝ որոշէ անախորժ զգացմունքների, ամօթխածութեան, խղճի և իսյումների աստիճանները։

ա) Քարոյականութեան պահանջմունքները, որոնք պիտի բղիսեն սանիկի հոգուց՝ ի հարկէ սկիզբն է առնում Փրկչի ուսումից (աւետարանական խօսքերից): Փրկչի խօսքերն են « Սիրի՛ր քո Տիրոջ Աստուծուն և քո բարեկամներին այնպէս՝ ինչպէս քեզ» « Եղի՛ր կատարեալ այնպէս՝ ինչպէս քո Երկնաւոր Հայրը կատարեալ է»: Աւեմն սանիկը անշուշտ պէտք է ունենայ մի անսպառ աղբիւր, որտեղից բղիսեն բոլոր մասնաւոր բարուակրթական պահանջմունքները։

ր) Երբեք բարոյականութեան միջոցները մանկան համար ծառայում են չետև եալները — անմիջական ազդեցութիւն, որը կատարուած լինի նոյն իսկ այն անձանց վերայ, որոնք նրա աչքին կարող են չեղինակի դեր խաղալ և նրա սէրը դրաւելու Այդպիսի հանգամանքներութեան իշարիկ առաջին տեղը բունութեան ծնօղները, Մանուկը անսահման կերպիւ սիրութեան ծնօղացը և հաւատութեան նոցա ամեն հանգամանքներութեան Օրինակի համար՝ եթէ մայրը մի օր և է բան գովում կամ պարսաւութեան մանկան մոքի խորքութափաւորութիւն է գործութեան Այդպիառածութեան այն բանն որ արգելուած է, մանուկը աստիճան առ աստիճան թաղնութեան, իսկ այն բանը որը գովուած է ծնօղներից — կամաց կամաց ձեռք է բերութեան եթէ որ մանուկը առաջին տեսակիցն է գործել, նրա մէջ զարթնութեան ամօթիածութեան զգացմունքը, իսկ եթէ երկրորդ տեսակիցը՝ բաւականութեան զգացմունքը

Մանկան վատ և լաւ գործողութեան և ուղղութեան հետ, շրջապատող անձանց ազդեցութիւնը նոյնպէս միախառնվութեան ծնողաց ազդեցութեան հետ, Արգէս բարոյակրթութեան ամենաերեսլին՝ երեխայի համար ծառայութեան գովասանքը և պարսաւանքը, հրամանն ու արգելութեան

1) Արգէս զի ծնօղաց կամ նոյն իսկ գաստիարակչաց կանոնները ունենան իսկական բարոյակրթական ուղղութիւն կամ գործողութիւն մանկան գովասանաց կամ պարսաւանաց ժամանակ, նոքա պիտի օգուտ քաղեն ո՛չ ըստ իրանց քմապաշտութեան և ո՛չ ըստ իրանց բոպէական բարկութեան, այլ այն բարոյակրթական գործողութեան ուղղութիւնից, որը արգելուած է կամ թոյլատրուած:

2) Արգէս զի գաստիարակիչների արգելական և հրամայական միջոցները ազդող և դրական լինեն, այն՝ ինչ որ միանգամ արգելուած է, միւսանգամ նոյնպէս արգելուած պիտի լինի, միայն աչքի առաջ ունենալ թէ որ աստիճանին է պատկանութ արարքը, (այսուղ աչքի առաջ պիտի ունենալ ժամանակը) Այն բանը՝ ինչ որ հոգույ լաւ տրամադրութեան ժամանակ արգելուած է — վատ տրամադրութեան ժամանակ թոյլատրուած է, թէ չէ՝ այդ գիտուածութ կարելի է ձգել մանկանն այն վիճակի մէջ, որ նա այլ ևս չի կարող պարզ որոշել թոյլատրուածը, բարոյակրթող օրէնքը անբարոյակրթականիցը, ուստի նրա հասուն հասկում կը փայլէ անհաստատամութիւն բազմութ:

3) Արգէս զի արգելման կամ թոյլատրութեան միջոցին այդ բոլորը ի կատար ածած լինին, հարկաւոր է առաջուց դրականապէս զննող ուղղութիւն ունենալ երկրորդ՝ իրրեք միջոց բարոյակրթութեան, ծառայութեան մանկան գաստիարակիչների և իրանց շրջապատող անձանց օրինակը, Մանուկը կամաց կամաց իրացնութեան բարոյականութեան այն բոլոր օրէնքները, որոնցով վարվութեին իրանները Ծրջապատող բարոյակրթող շրջանը անզագար ազդութեան մանկան վերայ և թողնութ:

է նրանում՝ հետքեր։ Մի և նոյն ժամանակ մանուկը սաստիկ իւրացնում է հասակաւոր երեխայոց արարմունքը և իրան օրինակելին է դարձնում։ Եթէ որ կրթողները աշխատում են զանազանութիւն զնել իրանց և օրինակելի երեխայոց արարմանց մէջ, այն ժամանակ բոլորովին կորչում է մանկան առաջը երկաւոր նշանակութիւնն ևս։

ա) Խղճմանքի խայթումն աւելի ևս կենտրօնաձիգ զօրութիւն ունի, կամ թէ չէ աւելի ևս առբւէտում է։ Խղճահարութեան զօրութեան չափը զանազան է և կախումն ունի պարզմտութիւնից և մեր վարքից, նոյնպէս և մեր ուշագրութեան կենտրօնաձիգ զօրութեան աստիճանից, մէկ խօսքով մեր բարդակրթական զարգացած կողմերի աստիճանից և առհասարակ մեր ներքին աշխարհի կազմակերպութիւնից։

Բարոյակրթական երրորդ զրական միջոցը ժառայումէ զանազան անձանց բնութեան ընտրութիւնը։ Անշուշտ հարկաւոր է որ միշտ սանիկին յաճախ ենթարկեն այնպիսի պայմանների, որոնցից օգուտ քաղէր և համակրանօք վերաբերէր գէպի բոլոր բարիքը։ Յայտնի է արդէն՝ որ ի՞նչպիսի մեծ աղդեցութիւն ունի մի որ և իցէ անհատի բարի արարմունքը ուրիշի չար գործունեութեանց վերայ։ Լաւ կը լինէր՝ եթէ սանիկը նոյն խոկ մանուկ հասակում՝ զզացմամբ ծանօթանար ներքին աշխարհի օրինակելի արարմանց բաւականութեանց հետ։ Այս հարկաւոր է նրա համար՝ որ հասակ առաջ ժամանակը նա աւելի շուտով կը համազգացուեր բարւոյն կամ չարին։

Աերջապէս բարոյականութեանը առաւել ևս նպաստում են բարոյացուցիչ խրատները, այսինքն բացատրութիւն բարոյակրթական պահանջմանց, անշուշտ հարկաւոր է մատնացոյց անել ընդհանրութեան բարեաց վերայ։ Սորան է վերաբերում մի և նոյն ժամանակ հօգու խորը տպաւորութեան այն բոլոր իգէալները, որոնք կը հակելին մանկանը գէպի բարի ճանապարհ։ Երբեք միջոց բարոյակրթական խրատներին ծառայում են բարոյական պահանջմանց մասնակիցները՝ անդամակիցները, որոնք պահպանութեան համար առ օրոյն են առլիս նշանուիլ լույն և որդամականերն։ Հասկանալի է ինքն ըստ ինքեւան որ բարոյակրթական խրատներն այն ժամանակ աւելի նպաստաւոր են, երբ խրատող անձինքը զիտեն հրահանգատուութեան ձեւը, չափը և եղանակը, որոնք անսպասելի կերպով արտափայլում են մասնիկի ժամանակուած հոգու մէջ։

բ) Բարոյակրթական խրատները պէտք է զույգահեռաբար ընթանան բարոյականութեան միւս մեթոդների հետ։ Պէտք է զիտենալ՝ որ յանկարծակի չի բացվում բարոյակրթական աշխարհը մանկան առաջը, նա փոքր առ փոքր է լայնանում, նայելով նրա մտաւոր կրթութեան զօրութեան աստիճանին։ Հասկանալի է՝ որ միանգամից չի կարելի երեխային

բացատրել նրա պարտականութիւնները զեպի Աստուած և դէպի իրան շրջապատող անձինքը։ Այդպիսի բարձր ճշմարտութիւնը և խորին հակացողութիւնը ձեռք են բերվում հասակ առած ժամանակ։ Սկզբին երիխան լաւ է վարվում, փախչումէ վատ արարմանքից, լսումէ միայն ծնօղաց պատուիրած խօսքերին, որք են «կարելի» կամ «չի կարելի» այդպիսով կամաց կամաց ըստ զարգացման մտաւոր զօրութեանց՝ նասկումէ հասկանալ—ի՞նչու մէկը բարի է կոչվում և կարելի է կատարել, իսկ միւսը չար, անբարոյական և չէ կարելի գործել ույտ։

Յ) Ինչպէս բարոյականութեանը, նոյնպէս էլ ֆիզիքական և մտաւոր կրթութեան պէտք է ուշք գարձնել, նոյն իսկ մանկական օրերից՝ այն բոպէից՝ երբ որ երեխայի մէջ զարթնումէ ինքնաճանաչութիւնը, մշակվում են բնաւորութեան տեսակները, բոլորովին անհիմն է այն կարծիքը, որ քանի չեն զարգացած մտաւոր զօրութիւնները սանիկի մէջ, պէտք չէ մտածել բարոյակրթութեան համար, իբրև թէ այնուհետեւ կը հասկանայ նա թէ ո՞րն է բարին և ո՞րը չարը, և ապա կը հակուի երկրորդից զէպի առաջինը։

Մարզուս բարոյականութիւնը, ինչպէս տեսանք, ո՞չ թէ կախումն ունի միայն զգացման տեսակից, թէ ո՞րն է բարին և ո՞րը չարը, այլ նոյնպէս շրջապատող անձինքներից և լաւ բնաւորութիւնից։ Շրջապատող անձանց օրինակը անմիջապէս ազդումէ մանկանը և բնաւորութիւնները մշակվում են առաջուց, չենց այն ժամանակ, երբ կարողանումէ հասկանալ ո՞րն է լաւը և ո՞րը վատը, եթէ յետածգուի բարոյակրթութիւնը, մինչեւ որ կը ծաղկի մանկան մտաւոր զօրութիւնը, արգեն հասունացած կը լինին նրա մէջ վատ սովորութիւնները և արմատ ձգած կունենան, ուստի յետոյ շատ դժուար կը լինի արմատախիլ առնել այն, ինչ որ սեփականացրել է մանուկը իրան։ Սակաւ անգամ չենք պատահում այն անձանց, որոնք շատ լաւ խոստովանվում են թէ ի՞նչն է լաւը և ի՞նչը՝ վատը, այն ինչ չեն կարողանում զսպել իրանց՝ վատ արարմանց մէջ, որոնք միշտ վաղուց ընդունած սովորութիւնները զրգովում են և յաղթում ապագայում ստացած բարի զգացմանցը և հակմանցը։

Եթէ որ մանկութեան առաջին տարիներում ուշադրութիւն դարձնէինք մանկանը, այն բարի օգտաւէտ սերմերը, որոնք ցանած են նրա երիտասարդական և մանկական տարիներում՝ շատ ամուր յենարան կը լինէին այն հակառակուող կողմերին և փորձանքներին, որոնց վրայով պիտի միշտ սայթաբուիլ և խղճահարուիլ հասակ առած ժամանակը։

(Պարզ.) ուս. Յ. ԱՐԴՐՈՒՆ ԵԸՆՑ.

•